

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմայն խմբագրատան մէջ:

(Պատրագրողացիք գիտնում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“)

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թւին

ԿԸ ՀՐԵՏՏՐԵՎԿԻ ԼՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէի հե-
տեւեալ օրերից:

Լրագրի դիմաց և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵՆԿՆԵՆ ՀԵՌԵՎԻՐՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԼՅՆ
ԽՄԲԵՐՈՒՄԸՆԵՐԻ մէջ:

ԼՄԵՆԻՆԻ ՀՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր:
Օտար քաղաքներից պէտք է գիտնել հետեւեալ հասցէով
ТИФ-
ЛИСЬ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն: Ներքին լուրեր—
Արտաքին տեսութիւն: «Թերթմանի» թղթ-
թակցութիւնը: Մասնաւոր թղթակցութիւնը: Մասնա-
ւոր թղթակցութիւնը: Նամակ թիւրքիայից: «Մը-
շակի» հեռագիրները: Հայտարարութիւնները: Բա-
նասիրական: Հայ երիտասարդութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՍԻԱԿԱՆԱԿՈՒՄԸ մեզ հաղորդում են, որ պ. Ն.
Ղուկասեանը խոստացել է տալ «Լրագրատան»
ընկերութեանը իւրաքանչիւր տարի 10 ռ.:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Ես ցոյց տուցի թիֆլիսի մեր ինտելիգենցիային
պատկանող երիտասարդութեան երեք զանազան
խումբերը, որոնք չընկալուած են երեք հիմնա-
կութիւնների—«Մշակ», «Մեղրի» և «Բողոք»—
խմբագրատները: Գրանք ձեռքնում են երեք տար-
բեր կուսակցութիւններ, որոնց գիտաւորութիւնը
խակացել է մի նոյն, բայց զանազանութիւնը
նրա մէջն է միայն, որ իւրաքանչիւրը այլ և այլ
ձանապարհով, այլ և այլ ուղղութեամբ է գլխում
իր նպատակին: Իսկ որ ձանապարհը աւելի ուղիղ
է, որը աւելի շուտ կը հասնէ,—այդ ցոյց կը
տայ մերձաւոր ապագան: Այսուամենայնիւ, այդ
երեք խումբերը, լաւ թէ վատ, գործում են, աշ-
խատում են, և այդ իսկ պատճառով յարգելի
են:

Բայց կայ մի ուրիշ խումբ ևս, որ յիշեալ երեք
կուսակցութիւններից ոչ մէկին չէ պատկանում:
Այդ խումբը ոչինչ չէ չինում, միայն մէջնեղում
անգործ պտտւում է, խօսում է, բամբասում է,
զէկզէկութիւններ է անում և ինտելիգենցիան
սարքում Ում պատահել է կարգալ Ալֆօնս Գո-
դէի վերջին ուսման (Jacques), խիստ ճիշդ գա-

Հինգշաբթի, նոյեմբերի 22-ին հայ դերասանական
մշտական խումբը ԹԻՖԼԻՍԻ Ամառային թատրո-
նում ներկայացրեց «Բաթաբալա» կոմեդիա 4 ա-
րարուածներով և 6 պատկերով: Աֆիշայի մէջ առ-
ված էր, որ պիեսին նոր մշակված է, և ճշմարիտ
միակ պակասութիւնը, որ ունէր այդ գրութեանը
այլ ևս չէր կայ: Մասնաւոր տիպը գրեթէ բոլոր-
վին փոփոխւած է: Տաղանդաւոր ներկայացրեց իրան
յատուկ շնորհով նկատել էր պիեսայի թույլ կողմը
և նրան ուղղել էր: Մշտական հայ թատրոնական
խումբը շարունակ 17 ներկայացումներ տուեց և
այդ 17 ներկայացումները ընթացքում միայն եր-
կու անգամ մենք կարողացանք բեմի վրա կենդա-
նի մարդիկ տեսնել, միայն երկու անգամ բեմը
ցոյց տուեց մեզ մեր կեանքը իր այնպիսի և մի-
և նոյն ժամանակ դեղեկի կողմերով: այդ երկու
ներկայացումները պ. Գ. Ստեփանեանը «Պէպոն»

ղափար կարող է ստանալ յիշեալ խումբի մասին:
Այդ ուսման մէջ կայ մի տիպ Գարժանտօն անու-
նով, որը իրան երեսակայում է երեքիւր բանաստեղծ:
Նրա գլխում լցված են հարկաւոր գրքերի վեր-
նագիրներ, որոնց նա մի ժամանակ պէտք է գրէ:
Միայն սպասում է իր մուգային, սպասում է ոգե-
ւորութեան: Այդ ոգեւորութիւնը նրա կարծիքով
կարող է տրել իրան, երբ ինքը կը բնակվի մի
շքեղ տան մէջ, չընկալուած գեղեցիկ պարտե-
զով և ծաղիկներով, նազելի սիրուհու կողքին,
և աչքի առջև կունենայ բնութեան հրաշալի տե-
սարանները: Այդ բոլորը սպըքում է նա, բայց
մուգան դարձեալ չէ յայտնվում: Նրա իղէաները,
նրա սիւսէտները գողանում են: Լոյս է տեսնում
մի գրքի, մի յօդուած, Գարժանտօնը բարկանում է,
թէ դա գրականական գողութիւն է, թէ այն նիւ-
թը ինքը վաղուց գլխումը ունէր և մտածում էր
գրել: Գարժանտօնը չընկալուած է իրան իր նման
մի քանի անալոգիկներով (неудачники), որոնք
նոյնպէս մեծ կարծիք ունեն իրանց հանճարի վրա,
և ճաշեր են ուտում բանաստեղծի մօտ, չորագոր-
ծում են նրա տաղանդը, և վճռում են ամբողջ
մարդկութեան ճակատագիրը: Վերջապէս Գար-
ժանտօնը մտածում է մի թերթ հրատարակել և
միանգամով ոչնչացնել Փարիզի բոլոր պարբերա-
կան հրատարակութիւնները: Նրա բարեկամ անա-
լոգիկները խոստանում են աշխատակցել և մի-
լիծենքով վաստակելու հաշիւ են տեսնում: Գար-
ժանտօնը մի տեղից փող է դնում և սկսում է
հրատարակութիւնը: Խմբագրատան հիմնական
դրամագլուխը մտնում է նրա անալոգիկ աշխա-
տակիցների ըստով, իսկ ինքը ստանում է երկու
բաժանորդներ միայն, մէկը իր սիրուհին, միւսը
իր սիրուհու նախկին սիրողը: Գարժանտօնը այս-

և «Բաթաբալա» էին: Բայց արդեօք ինչին վերա-
բերե՞նք, որ թատրոնական դահլիճը գրեթէ դարդակ
էր: Մենք ուրիշ պատճառ չենք կարող գտնել,
եթէ ոչ կոմիտեի սխալ ուղղութիւնը: Թոյնների,
սրերի, թմրացնող դեղերի արեւցնող ազդեցութեան
տակ գտնված հասարակութիւնը չուզեց զնալ
թատրոն և տեսնել իր կեանքը: Հաստատ աղբիւր-
ներից տեղեկացանք, որ երեքիւր երգչուհի տ. Ար-
տօի կօնցերային էլ, որ այդ գիշերը արվեցաւ Ար-
ծրուհու թատրոնում, հայերից շատ քչերն էին
ներկայ եղել, մինչդեռ Գողգորուա եղբայրների ֆը-
րանսական ցրիկը նոյեմբերի 22-ին հայերով է հ-
ղել լցված: Ուրեմն այսուհետեւ հայերին պէտք է
կամ ցրիկ, կամ «Արեան բծի» և «Արտերին» Հօ-
վարդի նման ներկայացումներ: Ներկայացման ըս-
կերին ուսաց և հայոց խումբերը երգեցին «Боже
Царя Храни»: Պ. Գ. Ստեփանեանը ստացաւ
ընծայ մի թանաքաման և գրել:

Հինգշաբթի, նոյեմբերի 22-ին տ. Արտօ և պ.
Պաղիլա Արծրուհու թատրոնում տուեցին իրանց
երկրորդ կօնցերը: Հասարակութիւնը, որ շատ
չէր, ծափահարութիւններով ընդունեց կօնցերային
աներին և ծափահարութիւններով ծածկեց նրանց
կատարած պիեսները: Ներկայացման սկզբին տ.
Արտօ և Պաղիլա երգեցին «Боже Царя Храни»,
որ ոգեւորութեամբ ընդունվեցաւ: Տ. Արտօ և
Պաղիլա ուղեւորվեցին Փոլսկային այնտեղ մի կօն-
ցերտ տալու, իսկ, երկուշաբթի, նոյեմբերի 26-ին
նրանք դարձեալ կը տան ԹԻՖԼԻՍԻՍ Արծրու-
հու թատրոնում երրորդ և վերջին կօնցերով: Այդ
կօնցերային մանրամասները արդէն հրատարակված
են առանձին աֆիշաներով:

Մեզ գրում են ՔԱՂԱՔԱՆԱԿՈՒՄԸ, որ թեմա-
կան տեսուչը այցելեց այդ գիշերը և ուսումնարանի
հոգաբարձուհի և ուսուցիչ նշանակեց: Ուսումնա-
րանի շինութիւնը չուտով պարտաստ կը լինի:

ԳԻՒԼԻՍԻՅԱՆ մեզ գրում են, որ անցեալ ձմեռ,
երբ «Արարատեան» ընկերութեան համար ամեն
տեղ փողեր էին հաւաքում, մի վաճառական այս-
տեղ էլ հաւաքեց 57 ռ., բայց այդ փողերը տեղ

քանը գտնէ կատարեց, բայց թիֆլիսի մեր դար-
ժանտօնները դուռ մտածում են...

Ամեն մի պերիօդ երիտասարդութեան կեանքի
մէջ նշանաւոր է լինում մի առանձին գործու-
նէութեամբ: Մեր դրական երիտասարդութիւնը
այժմ զոհաբերութեան պերիօդի մէջն է գտնվում:
Եւ այս պատճառով մեր բոլոր կրթողական հիմ-
նարկութիւնները, որպէս են լրացիլ, ամառգիր,
թատրոն, դպրոց, և այլն, պահպանվում են զոհա-
բերութիւններով: Խօսենք իւրաքանչիւրի մասին
առանձին:

Մինչդեռ ուրիշ ազգերի մէջ լրագրատները
հարստանում են, և աշխատակիցները ահապին
փողեր են ստանում,—մեր խմբագիրները ոչ միայն
չեն չափում, այլ իրանց քաղկից ամեն տարի մի
քանի հազար ռուբլի վնաս են կրում: Այդ մեծ
զոհաբերութիւն է: Դողմուրդը չէ նպաստում
գործին: Ամենայնողոված պարբերական հրատա-
րակութիւնը հաղիւ տարեկան 1000 բաժա-
նորդ է ստանում, իսկ անալոգիկները 3—4
հարկւր: Նոյնը կարելի էր ասել և դեք-
րի մասին: Ուրիշ ազգերի մէջ մի բանաս-
տեղծ մի լաւ ուսման գրքով, իր ամբողջ կեանքը
պահպանում է: Իսկ մեր մէջ բանաստեղծը պէտք
է համարել հեղինակին, եթէ կարողանայ տպա-
գրութեան ծախսը դուրս բերել: Եւ այս պատճա-
ռով գրականական ասպարէզը մեր երիտասարդու-
թեան համար մի վիշտ ասպարէզ է: Նրանց պէտք
է ժամանակի նահատակներ համարել: Ապագան
կը գնահատէ նրանց, կամ կատաղածացնէ, այդ
ուրիշ խնդիր է, իսկ ներկան հաց է պահանջում
խղճալական սէրը ոչ ամեն ժամանակ կարող է օ-
ժանդակել գրողներին յարատեւելու իրանց պարապ-
մունքի մէջ, երբ որ այդ պարապմունքը ասպրու-

չը հասցրեց: Մի պարոն, որ 3 ռուբլ է նուիրել,
հաշիւ է պահանջել վաճառականից, իսկ այս վեր-
ջինը խոստացել նուիրատուին 3 ռուբլու տեղ 10
ր. տալ միայն թէ նա լռի:

Մեզ հաղորդում են, որ ՂԱՋԱԽԻ գաւառում
սաստիկ թանգութիւն է:

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԹԻՖԼԻՍԻՆ» ԷՖԻՔԵՍԻՆ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿ-
ՑՈՒԹԻՒՆԸ ՎԱՆՆՑ ԶՈՒԼԻՍԻ 12-ԻՑ

Որովհետեւ Հայաստանի միւս գաւառներ
չեմ պտտած, հետեւագէս միայն Վասպուրա-
կանի Հայ Ժողովուրդի դաղափարը կրնամ
ներկայել, ընթերցողը կրնայ դատել կարծեմ,
թէ միւս գաւառացի հայերն ալ այսպէս են
թէ ոչ:

Վասպուրականի Ժողովուրդեան տղան մասը որ
մեծամասնութիւն կը կազմէ պարունակելով իր
մէջ ամբողջ զիւրացիներն, ձակատագիր
կոչուած անգղայ նախնականութեան որչափ
կարեւորութիւն և հաւատ կընծայէ, մինչ ա-
մեն բանի և երեւոյթի (թէ մեծ և թէ փոքր)
վրա անտարբերութեամբ կը նայի և առանց
պատճառն զիտնայու կամ հետազօտելու, կամ
զիտնայու թէ պէտք է հետազօտել, ձակա-
տագիրն կուտայ և այդ անշուշտ այդպէս
լինելու էր, կանէ ու կանցնի: Այս սովորի
զաղափարն երբ վերնայ, այն ատեն կրնայ հա-
ւատացուիլ թէ Հայաստանի Ժողովուրդը զինք
պաշտպանել կը զիտնայ և հետեւագէս կը կա-
րողանայ: Մեծուիլ, սպանուիլ, կողոպտուիլ

տի միջոց չէ տալիս: Այդ պարագաները փոքր
պատճառներ չեն, որ մեզանում գործներ կամ խո-
պառ չեն յայտնվում, կամ եղածները յառաջդի-
մութիւն չեն գործում:

Մենք չէինք ունենայ մեր այժմեան պարբերա-
կան հրատարակութիւնները, եթէ նրանց խմբագր-
ները նիւթապէս ապահովված անձինք չը լինէին:
Այդ մի մեծ բախտ է, որ հարուստները ձեռնար-
կում են այս տեսակ գործերի, և կարող են ամեն
տարի մի քանի հազար ռուբլի գտնել իրանց գա-
ղափարին: Բայց մինչև երբ: Ընդունում եմ, որ
մի Ժողովուրդի մէջ, որպէս մերն է, այս տեսակ
ձեռնարկութիւնները սկզբում պէտք է զոհաբերու-
թեամբ հիմնված լինէին: Բայց այդ անում է մի
ընկերութիւն, և ոչ մասնաւոր անձինք: Այդ կէ-
տից նայելով, մեր խմբագիրները աշխատութիւնը
պէտք է բոլորովին բացառական երևոյթ համարել:
Բաւական չէ, որ նրանք զոհում են իրանց արծա-
թը, այլ զոհում են իրանց հանգստութիւնը, ա-
ռողջութիւնը և վերջապէս բախտը.—զօրեց ուրիշ
ասպարէզներում նրանք աւելի երջանիկ կը լինէին:
Ես թէն շատ փոքր ծանօթ եմ մեր խմբագիրների
մասնաւոր կեանքին, բայց դարձեալ գիտեմ, թէ
ինչ տաժանակաւ աշխատութիւն են կրում նրանք,
գործի մեծ մասը իրանց ձեռքով կատարելով:
Խմբագիրը պէտք է ինքը ուղղէ գաւառներից ե-
կած թղթակցութիւնները և յօդուածները: պէտք
է շատ անգամ մինչև գիշերվայ ժամը 3-ը տպա-
րանում աշխատէ, սրբագրէ: և տուն վերադառ-
նալուց յետոյ պէտք է դարձեալ չը լինէ, այլ շըս-
տած, պէտք է միւս համարի համար յօդուածներ
պատրաստէ: Առաւօտեան 9 ժամին դարձեալ կա-
րելի է տեսնել նրան գրասեղանի մօտ, հասցէներ է
գրում, որ նոր դուրս եկած համարը փոստից յետ

վրա շինուած Եղեարքի Ս. Աստուածածնի շէնքը ու յիշատակարաններով լի վանքը տեղւոյն խուժողով մօլլայից զոհ գնացած է տակաւն մօտ տարիներս: Գերեալ Հին սրբափայլին լուռ ու տխուր կերպարանքն ամեն ականատես Հայու մօրմօր կը պատճառէ: Կարծես այս բաւ չէր:

Գանի մը օր առաջ գործով Գերեալին կողմերն ուղեորելով, քաղաքէս Ե—7 ժամ հեռաւորութեամբ Եղեարքի ու Գուգիւնի միջև գտնուած Խնձորէք *) գիւղը մնացի զի շէնքը, կարծես կակճալի իրողութեան մը ներկայ գտնուելու համար: Հոն ծանօթներէս միոյն տունը երբ նստած էի, գիւղին քահանայն արտասուելից այօք և տխրաբան զէմքով ներս մտնելով պատմեց, թէ կէս ժամ առաջ մինչդեռ իւր տանիքը կը շէնքէր, Գուգիւնէն եկող Մէհմէտ անուն հաւաքիչ հարկւարակտ մը թունալից հայհոյութեամբ զինքն ու Ս. կրօնը նախատեր և իրմէ օթեան ուղի է, այնպիսի հայհոյութեամբ, զոր մարդ լսելով կը սարսափէ, սակայն ինք լսելու ու պարտաւորել է լսել: Քահանայն աղիտորով ձայնել գայս և ուրիշ ասոր նման շատ ցաւալի զէպքեր պատմելով կուլար և Ազգն ու Առաջնորդարանը կը մեղադրէր: Իրեն սրտառու ձեւերը զիս յուզեցին, բայց չը գայրացայ, այլ համոզեցի ու յորդորեցի զայն, որ իսկոյն սիրտ առնելով առ ինքն կոչեց գիւղին «Խնձորէք», եկեղեցւոյն բանալիներն անոր յանձնեց և յայտարարեց թէ նոյն պահուն իսկ կը մեկնէ և Երեւան վերթայ բողոքելու ուր որ անկ է:

Հարկւարակտը կը լսէ, և քանիցս ոտովիաներ իրկելով կաղաչէ զքահանայն և առ ինքն կը հրաւիրէ զայն, առ ի սկզբան կը մերժէ, բայց գիւղացւոց թախանձանքէն ըստիպալ կը զիջանի երթալ: Մէհմէտ աղա իւր առաջնական կատարութիւնը կը թողու, զառնուկ կը դառնայ և բնաւ չընդունի որ զինուորական հարկւարակտ մը քահանայի մը նախատինք ընելու յանդէմ, իւր աստիճանին ու կառավարութեան անպատուութիւն համարելով այդպիսի բան մը:

Քահանայն այս կերպը երբէք յիշած ու գործածած չըլլալուն համար ներում խնայրեց ինձմէ:

Այս քահանայն կը պատմէր նաև թէ զիջելուն պատերազմին ժամանակ Փոքր-Սաիոյ ներսերէն պատերազմը դաշտը գնացող ի մէջ այլոց խումբ մը գինուոր գիշեր մը Խնձորէք կը մնան և հոն ստիպուած և արհաւիրք կը պատճառեն: Խնձորէքի բնակչաց կէտը Հայ, իսկ միւս կէտը Քուրդ են: Զինուորները Քուրդ գիւղապետը կը չարքինն աղիգի կեալուր էլ զինէն հնարեմէն ըսելով, Հայերը կը սարսափին, Քուրդը կը կեղծեն զերեքը, իրենց կանայքը եկեղեցւոյ մէջ կը փակեն և անմիջապէս ծածարին ձախափելու փափորուած խաւով կը Ծեփնեանապարտուն հրտակէն զաղտ պահելու համար զայն:

Գերեալին հասարակութիւնն այս օրերս ցաւաւանց տառապանաց ու հարստահարութեանց ենթակա եղած է, չը զիտեմք թէ այդ թշուառներն երբ շուէն ու հողի պիտի առնուն: Կառավարութիւնը կը ստիպէ այդ քառ գիւղացւոց որ ձիւղը երկու ասուր հեռաւորութիւն ունեցող գիւղէ մը արմաթը փոխադրեն սայլերով, և մարդու մը, երկու եղանակ սայլեր մը երկու օրուան իւր քարէ միայն 41/2 դահիկան կը վճարէ: Խնձորէքը զայնք կաղաչեն որ իւրաքանչիւրը սօրով 50—100 դահիկան կը վճարեն կառավարութեան, այդ հողէն ազատուելու համար, բայց չընդունու իր: Գերեալն գտնուած միջոցիս Կէք—դաշ անուն գիւղացի երկու Թուրք և Բրտասարդ նոյն գիւղէն երկու Հայ օրիորդներ զիշերն հափափելով աներեղոյ եղանակով թէ

տեղական և թէ՛ շրջակայ կառավարութիւնները խտուր հրամաններ հանեցին ռճարգործներուն հետը գտնելու համար: Գերեալն զինքն իր Գեր. Առաջնորդին իրաւասութեան ենթակուած ըլլալով, Պատրիարքարանէն տեղոյն քահանաներէն Կիւմիշլիանցի Տ. Պետրոս արժանեւորի և բանիւրուն քահանայն յառաջիկայ երկուշարթի մասնաւոր պաշտօնով Գեր. Առաջնորդի կողմէն Գերեալին կողմերով, անշուշտ հոն տեղի ունեցած չարքիքը քննելու համար:

ՄԱՍԻՍԻ ԹՂԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊՐՈԽՍԱՅԻՑ
ՍԵՊՏ. 24-ԻՅ

Ամսոյս 21-ին Գաղղոյի զեպան Վսեմ. Պ. Պետրիէ քաղաք ժամանեց: Հետեւեալ առաւօտուն կուսակալ Ահմէտ Վէֆիզ փաշան Նորին վսեմութեան այցելութեան գնաց, ինչպէս նաև քաղաքիս առաջնորդ Գեր. Բարթուղիմէոս սրբազանը ծնունց առաջնորդին հետ միասին: Նոյն իրիկունը ժամը 11 1/2-ի միջոցները Վսեմ. Պ. Պետրիէ իւր առաջին թարգմանին հետ փոխադարձ այցելութեան եկաւ Բարթուղիմէոս սրբազանին և մէկ ժամէն աւելի տեսակցելէ յետոյ զոհ սրտիւ մեկնեցաւ: Երկրորդ օրը ժամը 5-ին ատենները Վսեմ. Պ. Պետրիէ իւր ընտանեանց հետ միասին կրկին այցելութեան եկաւ սրբազանին իւր հետն ունենալով նաև Վսեմ. Ահմէտ Վէֆիզ փաշան. Գեր. առաջնորդը Վսեմ. զեպանին և կուսակալին զալուսար իմանալով եկեղեցական դասը զգետնուորել տուաւ և հինգ հարկւար չափ երկու օրուէ դարձողական երգեցիկ մանուկներով զանոնք զեպանը գիմաւորելու գնաց: Առաջնորդարանին բողոքալիքը խուռն բազմութիւն հաւաքուած էր: Սրբազան առաջնորդը մինչև առաջին կտաքը գնաց, ուր նստած էին Վսեմ. զեպանն և Ահմէտ Վէֆիզ փաշան, անձամբ կառքէն իջուց զՊ. Պետրիէ և իւր թէն անոր տալով Ահմէտ Վէֆիզ փաշան ալ տիկին Պետրիէին թէք մտնելով եկեղեցի մտան եկեղեցական դասուն և դարձողական տղայոց հետ միասին, որոնք ազգային երգեր կերգէին: Յետոյ նոյն հանդիսիւ առաջնորդարանը գնացին, ուր Գաղղիի երկու մը կարգացուցաւ, որուն նոյնպէս Գաղղիի երկու պատասխանեցին Պ. Պետրիէ և Վսեմ. կուսակալը: Դեպքանը մեկնած ժամանակ իւր խորին գոհունակութիւնն յայտնեց Գեր. առաջնորդին, և անոր լուսանկար պատկերը խնդրեց և ըստացաւ:

Կը խնդրեմք մեծ. խմբագիր, որ երկտող գրութիւնս պատուական թերթերուդ մէջ հրատարակել բարեհաճիք:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՈՒՄԻՑ
Վսեմ, 30 սեպտեմբերի

Ես շատ անգամ առիթ ունեցել եմ կարգաւ Վշակի թերթեր և բողոքող իրաւացի կը գտնեմ նրա այն հայեացքը որով կը յարձակի: Պոլսոյ ազգային ժողովոյ և վարչութեան անդամաց վրայ ի դիտելու և այլն կոչելով զանոնք, փաստի երբ ի նկատի ունենանք նոցա ընթացքը, չենք կրնար երբէք ուրիշ անուն տալ նոցա, զի այնպիսի քաղաքականութիւն մը բռնած են որ տեսնուած բան չէ, որ լոկ ի դիտելու է: Անթիլ օրինակներէն միայն մէկն յիշեմք, բաւական է:

Յայտնի է որ Վ. Պոլսոյ ազգային ընդհանրապէս կարելի եղածին չափ աշխատութիւն չեն խնայել Հայաստանի փրկութեան համար, յայտնի է որ Վ. Պատրիարքը օրն ի բուն քրտինք կը թափէ Հայաստանի համար եւրոպական դաստիարակները վազելով և զանազան տեղեր հեռաւոր տալով և առնելով: Սակայն մինչ այս ամեն աշխատութիւններն կը կատարվին, միւս կողմ Հայաստանի մէջ կը փչանայ, փաստի փոխանակ Հայաստանի հայրենաբարձուրդը որ զենք առնուն, զենքի վարժին, անձնապաշտպանութիւն ուսանին,

իրենց ազգայն գոյութեան վրայ դադարաւոր ունենան, ընդհակառակն կը զննենք մէջ կը լսեն թէ զենք առնուն հայոց չը վայելի, թերեւայ և քրդաց կը վայելէ, զի նոքա անօրէն են, իսկ հայերն որ արքայութեան, երկնից երջանկութեան համար միայն աշխարհ եկած են, երբէք պէտք չէ որ զենք առնուն, զի եթէ առնուն, կը զրկուին այն յաւիտեական բարիքներէն. Հայերն երջանիկ համարելու են զիրենք որ քրդերէն հարստահարութիւն կը կրեն, փաստի անով կը հաստատուի որ հանդերձեալին մէջ երջանիկ պիտի լինին, ըստ որում այս աշխարհի մէջ տանջուող քրիստոնէայն միւս աշխարհի մէջ անշուշտ պիտի փառաւորուի և այլն և այլն:

Այս այսպիսի քարոզներով Հայաստանի մէջ պատուար կը կառուցանեն կղերներն և Պոլսոյ ազգայնաց բազմաթիւ ճգնաճիւղ, որք կը թափեն Հայաստանի փրկութեան համար և նոցա ներգործութիւն կը հակակշռեն, ի դեռ կը հանեն, կը փրճացունեն: Իսկ Վ. Պոլսոյ ազգային իշխանութիւնը իմանալով հանդերձ թէ Հայաստանին մէջ զիսկանացուցիչ, մահացնող հոգւոյ, մարդ և մարմնոց կարողութիւններն շատոյ քարոզներ կը խօսուին կղերաց կողմէն, այնուամենայնիւ անտարբեր կըմնայ և չը պատժէր այնպիսի կղերներն, մեծ մեծ պաշտօններու վրայ կը թողու այնպիսիներն, որով նոյն իսկ մեծաւ կը տայ հայկական այն դասին, զոր Վ. Պոլսոյ ազգայնաց, Վ. Պատրիարք և այլն այնքան ևս աւելով կը պաշտպանեն: Ի՞նչ օգուտ է Վ. Պատրիարքի դիմելն դեպքայնաց և հայ ազգութեան իրաւունքներն պաշտպանել, մինչդեռ Հայաստանի մէջ կղերներն կը քարոզեն ժողովրդեան թէ Բար իրաւունքը պաշտպանելու համար զենք վերցունենք քրիստոնէութեան դէմ է, հետեւապէս զայդ ընել յանդիմանող դժոխքի կը դատապարտուի. ուստի թողու է բոլոր իրաւունքները, կողոպտողին յօժարութիւն տալու է, զարնողին վիզ պարզելու է, հարստահարողին ներքու է և այլն, որպէս զի արքայութիւն երթալ կարելի լինի և այլն այլն:

Այդ հասարակաց դատաստանը թող վճռէ թէ բանականութեան, տրամաբանութեան, իմացականութեան և այլն դէմ չէ Վ. Պոլսոյ ազգային իշխանութեան բռնած ընթացքը, ինքն կը պօսայ աշխարհի առաջ թէ Հայոց իրաւունքներն ալ պէտք է պաշտպանուին, և մի և նոյն ժամանակ չի պաշտպանեցունք զաւառաց այն կղերներու բերանը, որք կը լրբանան ասել թէ հայուն համար իւր իրաւունքը պաշտպանել դժուար է երթալ է, և պէտք է որ հայն այս աշխարհի մէջ իրաւունք փնտռէ և այլն: Վ. Պոլսոյ Ազգային վարչութիւնը թերեւ քիչ մեղադրելի լինէր, եթէ յիշեալ դժոխքայն յունչ իմաստով քարոզներն չը ձանձնար և կամ եթէ անհշուտ անտրին կարգէ լինէին այսպիսիներն: Սակայն քանի որ աղէկ կը ձանձնայ դանդաղ և լաւ դիտէ թէ ինչ բարձր պաշտօնի վրայ են դրած և դարձեալ անհոգ կը մնայ, ամեն ողջամիտներուն աւելի կը տայ կարծել թէ լոկ ցոյցեր են, կեղծ արարողութիւններ են Վ. Պոլսեացւոց Հայաստան, ինքնավարութեան, հայկական իրաւունքը, և այլն պատառն ու Քիւրդ ի տ ա տ ն բառին դէմ անդրկական կառավարութեան այնչափ ցաւելն, տրամաբան և այլն այսպիսի ցուցանողական շարժումներ անեն: Վսեմ զի գիտէք թէ ինչպիսի բարձրատիման եկեղեցական մը և Հայաստանի ինչ կարեւոր դասաւոր մը մէջ յիշեալ իմաստով քարոզներ խօսած է, կը խօսի և վարչութիւնն ալ իմացած է և կիմանայ: Այդ դիմաւորեցիչ, այդ իմաստական քարոզն նոյն իսկ Վսեմ մէջ խօսած է և խօսողըն ոչ միայն հասարակ կղերներն են, այլ նոյն ինքն Վսեմ պատրիարքական փոխաւորը Երեւան արք-եպիսկոպոսն է: Եթէ էր ճէ մ'անը է ք. ք. եւ րո լրագրող Վսեմ թղթակիցը Վսեմ ցի յուլիս 12 թուոյ Երեւան եպիսկոպոսի այդ տեսակ քարոզներէն մէկը հրատարակութեան իրկած և Եթէ էր ճէ մ'անը է 63 թուոյ մէջ տպուած լինելով Վ. Պոլսոյ ազգային ընդհանուր ժողովոյ մէջ Վ. Փաթիւղեան էթ-ի առաջարկութեամբ վիճաբանութիւն բացուած էր և որոշուած էր վարչութեան յանձնարարել, որ Երեւան եպիսկոպոսի հարկ եղած պատիժն տար: Սակայն դժբաղդաբար մինչև ցարդ չը գործողաց վարչութիւնը ընդէ. ժողովոյ որոշումն և դեռ Երեւան եպիսկոպոս պաշտօնի վրա է այս տեղ և դեռ կը ժպտի դարձեալ եկեղեցաց մէջ ասել թէ Աստուածաշնչով կը հաստատուի իմ ասածները, որոց ով որ չը հաւատար, Աստուած է, անկրօն է, անհաւատ է, և այլն: Այս թէ ինչ է իւր ըսածը, զոր կարտագրեմ թէ էր ճէ մ'անը է թղթակցի Վսեմ ցի ի նամակէն և որոյ վրայ Վ. Փաթիւղեան էթ. վիճաբանութիւն բացած էր ընդհանուր ժողովոյ մէջ: Վ. Պոլսոյ ազգային վարչութիւնը Երեւան եպիս-

կոպոսի յիշեալ քարոզն լսելէն, ընդէ. ժողովէն զայն պաշտօնական անել հրաւիրուել և Վ. Պոլսոյ բոլոր լրագրաց մէջ Երեւանի պատիժ խնդրող և առաջարկող յօդուածներ կարդալէ ետքն ալ դարձեալ պաշտօնընկէց ըրած չէ Երեւան: Թէ ինչ պաշտօնը կայ ասոր մէջ, անկարելի է զիտնալ: Թերեւս դուք, մեծ. խմբագրապետ, Թերեւս դուք միայն կարենաք զիտնալ Վշակի յատուկ թափանցողականութեամբ և հաճեք ի վեր հանել զայն մի առաջնորդող շանթահարիչ յօդուածով: Իմ կողմանէ ասիէ աւելի խօսել աւելորդ կը համարեմ. միայն դիտել կը տամ թէ ինչ իրաւունք ունենք յարձակիլ թուրք կառավարութեան վրա երբ չար և անարդար պաշտօնեայ մը պաշտօնանկ չընեն, քանի որ մեր ազգային վարչութիւնը դեռ պաշտօնի վրա կը պահէ զԵրեւան, որ զէմ լրագրի չը մնաց գրեց, բերան չը մնաց զանգատեց: Երբիակալ խրկած եմ թէ էր ճէ մ'անը մէջ տպուած Վսեմ ցի ի մարմող յօդուածն, զոր թէ կուղէք հրատարակեցէք Վշակի մէջ, որպէս զի ընդհանուր դադարաւոր մ'առնուք թէ յիշեալ քարոզի նման հոգեպան և մահացու քարոզներ, զոր խղճի կատարեալ հանդարտութեամբ կրնամ անուանել հրէշայն լատիւներ, ինչ դառն և վնասակար տպաւորութիւն ունեցած են տեղւոյս ժողովրդեան վրա և թէ որչափ արգելք եղած են ժողովրդեան յառաջադիմութեան և նաև թէ ինչպէս խափանած են անձնապաշտպանութեան ըսկզբունքի տարածումը: Զայդ իմանալով շատ աւելի հեշտ կը լինի իմանալ նաև թէ Երեւանի նման անձինքը գաւառներէն արտուել մինչև ինչ աստիճան անհրաժեշտ և օգտակար է այսպիսի ժամանակ մը յորում մարդկութեան առանցքը անձնապաշտպանութեան վրա կը դառնայ: ***

ՄԵԾԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱԶԳԻՐՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

Կարել, 19 նոյեմբերի (1 դեկտեմբերի) Պոլսաբայի կարգադրութեան համաձայն, այսօր էմիրը կապիտան Տէրնիկի ուղեկցութեամբ ուղեորվեց զէպի Պէշապար:

ԲԵՐԼԻՆ, 20 նոյեմբերի (2 դեկտեմբերի) Նրէկ Փօրչակովը ներկայացաւ զերմանական կայսրուհուն և թագաժառանգ իշխանին, որը յետոյ նրան այցելեց:

Վ. ՊՈԼԻՍ, 20 նոյեմբերի (2 դեկտեմբերի) Դեկտեմբերի 12-ին վերջանում է Գուգիւնիէի թուրք զօրքերից դատարկելու ժամանակը: Մուխտար փաշան հասաւ Պրիզիկը: Բօլքաւրական զործակաւորներն զգուշացում են շրջանակների ընկերութիւններին, որպէս զի նրանք յանձն չառնեն մահմեդական փախուստականներին Բօլքաւր հասցնել մինչև որ դրա առիթով բօլքաւրական իշխանութիւններն հետ մի որոշեալ համաձայնութիւն չը կայանայ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 20 նոյեմբերի: Նոյեմբ. 19-ին Մոսկվայից հեռագրում են: Կայսրը նոյեմբերի 19-ին երկուդան յաջողութեամբ հասաւ Մոսկվա: Երկաթուղու կայարանում բողոք ներշնչանաւոր պաշտօնատարներին ընդունելուց յետոյ, Կայսրն ուղեորվեց Վլէրան Աստուածածնի մատուռը, որից յետոյ նա գնաց Կրէմլի պալատը: Ս. Պետերբուրգի ժամանակաւոր զենեակ նահանգապետը ազնուական Միսկիի և հրաժարված պրապորշչիկ Տարխանովի դատաւիժուրը ընկելուց յետոյ, ի նկատի ունենալով երկու մեղադարանների անպիտան լինելը, և նրանց կատարեալ զգլխումը, որ յայտնված է նրանց տուած խնդիրների մէջ և որոնց մէջ առաջինը թողութիւն է խնդրում զենեակ նահանգապետից, իսկ երկրորդը խնդրում է, որ նա նրա պատիժը մեղմացնէ այն իշխանութեամբ, որ բարձրագոյն հրամանով տրված է նրան,—այս բողոքը յետոյ, զենեակ նահանգապետը վճռեց: Միսկիին և Տարխանովին բռն լոր իրաւունքներից զրկելուց յետոյ, ենթարկել առաջինին հանքերի մէջ տաժանակիր աշխատութիւնների անորոշ ժամանակով իսկ երկրորդին բանտարկել տասը տարի բերդերի մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 20 նոյեմբերի: Պետական բանկի 50% տոմսով առաջին շրջանի արժէ 94 ռ. 25 կ., երկրորդ 93 ռ., երրորդ 94 ռ. 37 կ., չորրորդ 94 ռ. 12 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսն արժէ 232 ռ., երկրորդ 236 ռ. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսն արժէ 90 ռ. 75 կ., երկրորդ 90 ռ. 75 կ., ոսկի 7 ռ. 83 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25,19 պէնս. ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 214 մարկ, Փարիզի վրա 265 ֆրանկ 25 սանտիմ: Տրամադրութիւնն ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

*) Ասիական Սինեաց Խնձորէք բերդը չէ, ուր մէկ ու կէս դար առաջ Միսկի թալ զորապետը մատնութեամբ սպանուեցաւ:

ВЪ 1880 ГОДУ.

5-6